ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-21/4-1

ք. Երևան « 12 » մարտի 2021 թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական Գարիկ Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սուրեն Մկրտչյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի** կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N1 և N 1.1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N1 և N 1.1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N1 և N 1.1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N1 և N 1.1 հավելվածով հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N1 և N 1.1 հավելվածով հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **1 105 000 (Մեկ միլիոն հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

1-ին չափաբաժնի համար 4 788 000 (չորս միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

4-րդ չափաբաժնի համար 5 388 000 (հինգ միլիոն երեք հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

1-ին չափաբաժնի համար 8 307 400 (ութ միլիոն երեք հարյուր յոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

4-րդ չափաբաժնի համար 9 367 900 (ինը միլիոն երեք հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N1 և N 1.1 հավելվածով հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքներն ու պարտավորությունները փոխանցվում են՝ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	ք. Երևան,, Ա. Ահարոնյան 22 փ.
Կառավարական տուն 1	բն. 30
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	« Ամերիաբանկ » ՓԲԸ
ՀՀ 900011023984	Հ/Հ 1570030407870200
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 00465342
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 12 » մարտի 2021 թ. կնքված
N ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-21/4-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	50111130-27	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն հավելված 1.1 Տեխնիկական բնութագիր- գնացուցակի	դրամ	800 000	1	ք.Երևան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2021թ.
4	50111130-2	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն հավելված 1.1 Տեխնիկական բնութագիր- գնացուցակի	դրամ	305 000	1	ք.Երևան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2021թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011023984
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ
ք. Երևան,, Ա. Ահարոնյան 22 փ.
բն. 30
« Ամերիաբանկ » ՓԲԸ
Հ/Հ 1570030407870200
ՀՎՀՀ 00465342

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 1. 1
« 12 » մարտի 2021 թ. կնքված
N ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-21/4-1 ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր-Գնացուցակ*

ՀՀ դրամ

ՀՀ	SU-1,SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	(Չափաբաժին 1) NISSAN TIDA 1.6 I -2008թ. JN1CC13C59T027547 CHEVROLET NIVA 21230GLS-2006թ. X9L21230060129360 NISSAN TIIDA 1.6-2009թ. JN1CC11DX9T000498 HUNDAI TUCSON 2.0-2008թ. KMHJN81BP8U931343 RENUALT FLUENCE 2.0-2012թ. VF1LZBT0T47108421	(Չափաբաժին 4) HYUNDAI GRANDEUR 3.3-2008թ. KMHFC41DP8A327429 HYUNDAI SONATA 2.4-2007թ KMHET41CP7A371853
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը		
1	Բռնկման համակարգի ստուգում	576	575
2	Սառեցման համակարգի ստուգում	576	575
3	Յուղման համակարգի ստուգում	576	575
4	Արտացման համակարգի ստուգում	576	575
5	Կցորդման համակարգի ստուգում	576	575

6	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	576	575
7	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	576	575
8	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	576	575
9	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	576	575
10	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	576	575
11	ABS համակարգի ստուգում	576	575
12	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	576	575
13	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	576	575
14	Թափքի վիճակի ստուգում	576	575
15	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	576	575
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումը		
16	Շարժիչի հանում տեղադրում	28,818	37,385
18	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	5,764	6,327
19	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	5,764	5,752
20	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	17,291	17,255
21	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	11,527	12,653
22	Շարժիչի գլխիկի վերանորոգում	17,291	18,405
23	Փականի խցուկի փոխարինում	2,882	2,876
24	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	23,054	25,882
25	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	3,458	3,451
26	Հրիչի փոխարինում	2,017	2,013
27	Ատամնավոր փոկի փոխարինում	20,172	21,856
28	Փոկանիվի փոխարինում	5,764	5, 752
29	Ձգող հոլովակի փոխարինում	8,645	8,627

30	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	6,916	8,627
31	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	25,936	28,758
32	Մխոցային օղակների փոխարինում	25,936	27,607
33	Թափանիվի հանում և տեղադրում	20,172	18,405
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
34	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	576	575
35	Յուղի պոմպի փոխարինում	14,409	14,379
36	Ղեկավարման բլոկի վերանորոգում	20,172	20,130
37	Բռնկման կարգավորում	2,882	2,876
38	CO կարգավորում	2,882	2,876
39	Օդի զտիչի փոխարինում	576	575
40	Սրահի զտիչի փոխարինում	1,153	1,150
41	Ինժեկտորի ֆորսունկայի փոխարինում	4,034	4,026
42	Ինժեկտորի ֆորսունկայի մաքրում	4,034	4,026
43	Վառելիքիմղիչի փոխարինում	7,493	7,477
44	Վառելիքի զտիչի փոխարինում	5,764	6,902
45	վառելիքի բաքի հանում և տեղադրում	5,764	5,752
	3. Սառեցման և արտածման համակարգ		
46	Հովհարի փոկի հանում և տեղադրում	2,882	2,876
47	Հովհարի հանում և տեղադրում	6,916	8,052
48	Ռադիատորի հանում և տեղադրում	5,764	5,752
49	Ռադիատորի վերանորոգում	20,172	23,006
50	Թերմոստատի փոխարինում	5,764	6,902
51	Ջրի պոմպի փոխարինում	5,764	6,327
52	Ընդարձակող բաքի փոխարինում	4,611	4,601
53	Խլարարի հանում և տեղադրում	5,764	6,327
54	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	2,305	2,301
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		

55	Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում	8,645	8,627
56	Բանվ.կամ գլխ.գլանի վերանորոգում	8,645	11,503
57	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	11,527	
58	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	5,764	8,627
59	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	576	575
60	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	17,291	20,130
61	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	14,409	17,255
62	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	18,443	20,130
63	ԱՓՏ-ի վերանորոգում	172,906	172,547
64	ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում	11,527	11,503
	5. Առջևի և հետևի կամրջակներ		
65	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	20,172	18,980
66	Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում	16,138	20,130
67	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	8,645	8,627
68	Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում	10,951	11,503
69	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	8,645	9,202
	6. Կախոց		
70	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	23,054	25,882
71	Տրավերսի հանում և տեղադրում	11,527	11,503
72	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	5,764	5,752
73	Անվակունդի առանցքակալի փոխարինում	5,764	5,752
74	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	2,882	2,876
75	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	2,882	2,876
76	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	2,882	2,876

77	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	2,882	2,876
78	Զսպանակի հանում և տեղադրում	3,458	3,451
79	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	3,458	3,451
80	Ներքևի լծակի հանում և տեղադրում	2,882	2,876
81	Ներքևի լծակի վռանների փոխարինում	2,882	2,876
82	Առջևի աջ կամ ձախ ձգաների հանում և տեղադրում	3,458	3,451
83	Միջին ձգանի հանում և տեղադրում	3,746	3,739
84	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	5,764	6,902
85	Վերևի լծակի հանում և տեղադրում	3,458	3,451
86	Վերևի լծակի վռանների փոխարինում	3,746	4,601
87	Գնդե հոդակապերի փոխարինում	4,034	4,026
88	Ծայրակաների հանում և տեղադրում	4,611	4,601
89	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	3,458	3,451
90	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	2,882	2,876
91	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	1,153	1,150
92	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	865	863
93	Հետևի զսպանակի փոխարինում	3,458	3,451
94	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	3,458	3,451
95	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում	2,017	2,013
96	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	5,764	5,752
97	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	4,034	4,026
98	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	4,611	4,601
99	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	4,611	4,601
100	Անվաբացքի կարգավորում	1,729	1,725
101	Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	1,729	1,725
	7.Ղեկային մեխանիզմ		

104	Ղեկային կալունի հանում և տեղադրում	8,645	8,627
105	Ղեկային կալունի վերանորոգում	14,409	23,006
106	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	6,916	6,902
107	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	5,764	5,752
108	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	8,645	8,627
109	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	2,882	2,876
110	Հիդրոուժեղարարի փոխրակի հանում և տեղադրում	4,611	4,601
111	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	5,764	6,902
112	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	17,291	17,255
	8. Արգելակային համակարգ		
113	Գլխ.գլանի հանում և տեղադրում	9,222	9,202
114	Գլխ. գլանի վերանորոգում	9,222	9,202
115	Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում	8,645	8,627
116	Բանվ. գլանի հանում և տեղադրում	4,034	4,026
117	Բանվ. գլանի վերանորոգում	7,493	7,477
118	Արգելակային համակարգի օդահանում	1,729	1,725
119	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	4,611	4,601
120	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	4,611	4,601
121	Առջևի սուպպորտի վերանորոգում	4,611	4,601
122	Հետևի սուպպորտի վերանորոգում	4,611	4,601
123	Արգելակային փողրակի փոխարինում	2,305	2,301
124	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	2,882	2,876
125	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	2,882	2,876
126	Հետևի կոճղակների փոխարինում	2,882	2,876
127	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	3,170	3,163

128	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	3,170	3,163
129	Արգելակային սկավառակի հղկում	5,187	5,176
130	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	7,493	7,477
131	ABS-ի հանում և տեղադրում	5,764	5,752
132	ABS-ի վերանորոգում	5,764	5,752
133	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	7,493	6,902
134	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	5,764	5,752
	9. Էլեկտրասարքավորում		
135	Էլեկտրասարքավորման վերանորոգում	5,764	5,752
136	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	4,611	4,601
137	Գեներատորի հանում և տեղադրում	6,916	6,902
138	Գեներատորի վերանորոգում	11,527	12,653
139	Մեկնարկիչի հանում և տեղադրում	5,764	5,752
140	Մեկնարկիչի վերանորոգում	6,916	11,503
141	Առջևի լապտերի հանում և տեղադրում	1,729	1,725
142	Հետևի լապտերի հանում և տեղադրում	1,729	2,876
143	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	2,882	2,876
144	Վազքաչափի հանում և տեղադրում	4,611	5,176
145	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	4,611	4,601
146	Սարքերի պանելի հանում և տեղադրում	23,054	23,006
147	Արագաչափի հանում և տեղադրում	6,916	6,902
148	Ազդանշանի հանում և տեղադրում	4,611	4,601
149	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	5,764	5,752
150	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	6,916	7,477
151	Ազդանշանային համակարգի տեղադրում	8,645	8,627
152	Մագնիտոլային տեղադրում	5,764	5,752
153	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	5,764	5,752

154	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	5,764	5,752
155	Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	17,291	23,006
156	Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	11,527	11,503
157	Էլեկտրական տվիչների փոխարինում	1,153	1,150
158	Էլեկտրական անջատիչների փոխարինում	576	575
159	Վառոցքի կոճի փոխարինում	1,153	1,150
160	Վառոցքի մոմի փոխարինում	1,153	1,150
161	Կոնդիցիոների լիցքավորում	11,527	12,653
162	Կոնդիցիոների վերանորոգում	8,645	11,503
	10. Այլ ծառայություններ		
163	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում, գինը 1 քառ.դմ-ի համար	576	575
164	Անիվի հանում և տեղադրում	576	575
165	Անվադողի վերանորոգում	576	575
166	Անիվի բալանսավորում	1,153	1,150
167	Անիվի վալց	2,882	2,876
168	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ-ի համար	1,729	1,725
169	Խառատային աշխատանքներ, գին 1ժ համար	2,882	2,876
170	Փականագործի աշխատանքներ, գին 1ժ համար	2,882	2,876
171	Քարշակի ծառայություն գին 1կմ, համար	576	575
172	Սրահի քիմմաքրում	11,527	11,503
173	Դիմապակու հանում և տեղադրում	11,527	11,503
174	ռետինե գորգերի հավաքածու	11,527	11,503
175	Ապակիների թաղանթապատում	17,291	17,255